Մեկնարկել են Ջերմուկի զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման աշխատանքների մրցույթները

Հայտերի ներկայացման հրավեր

Երկիրը՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագիրը՝ **Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման /ՏՏԵԶ/**
Վարկ No՝ **P150327**
Պայմանագրի անվանումը՝ **Ջերմուկ քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների վերակառուցում (3 լոտ)**
Լոտ 1՝ Շահումյանի, Վ. Վարդանյանի, Մյասնիկյանի, Մելիք Աղամյանի և Չարենցի փողոցների վերանորոգում, վերականգնում և «Քարայծ» տանող ճեմուղու կառուցում TUR 11.2
Լոտ 2՝ Մաշտոցի փողոցի բարեկարգում TUR 11.3
Լոտ 3՝ Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում TUR 11.6
Պայմանագիր No՝ **TUR-11.2.3.6**
25 մայիսի 2021թ.

1. Հայաստանի հանրապետությունը **Համաշխարհային բանկից** ստացել է ֆինանսավորում՝ **Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի** համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **TUR-11.2.3.6 Ջերմուկ քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների վերակառուցում (3 լոտ)** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:
2. Սույնով **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը** հրավիրում է ներկայացնել կնքված մրցութային հայտեր իրավասու մասնակիցներից՝ **Ջերմուկ քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների վերակառուցում (3 լոտ)** շինարարական աշխատանքների համար:

Աշխատանքները ներառում են՝

Լոտ 1 Շահումյանի, Վ. Վարդանյանի, Մյասնիկյանի, Մելիք Ադամյանի և Չարենցի փողոցների վերանորոգում, վերականգնում և «Քարայծ» տանող ճեմուղու կառուցում TUR 11.2՝

Շահումյանի, Վ. Վարդանյանի, Մյասնիկյանի, Մելիք Ադամյանի և Չարենցի փողոցների վերականգնում, բարեկարգում և «Քարայծ» տանող ճեմուղու կառուցում համապատասխան ճանապարհների երկայնքով լուսավորության համակարգի բարելավում, ջրահեռացման տարրերով համալրում: Երթևեկելի մասի ա/բ ծածկի, մայթերի, սիզամարգերի, իջատեղերի նորոգման աշխատանքներ, նշագծում /նաև ճանապարհի երկայնքով հեծանվուղու/ և նոր նշանների տեղադրում, նոր դեկորատիվ պատեր, նստարանների և աղբամանների տեղադրում, ըստ անհրաժեշտության զբոսաշրջային և ճանապարհային ցուցանակներով կահավորում: Շահումյան փողոցի հուշարձանի տարածքի բարեկարգում: «Քարայծ» տանող ճեմուղու կառուցում մասով նախատեսվում է «Քարայծ»-ի մոտի այգու բարեկարգում, գոյություն ունոցող ջրագծերի և գազատարի տեղափոխում, արտաքին լուսավորություն, բրեկչա տիպի երեսապատումով:

Լոտ 2 Մաշտոցի փողոցի բարեկարգում TUR 11.3՝

Աշխատանքները սկսվում են Ջերմուկի ճոպանուղու սկզբնամասի հուշաքարից և ձգվում մինչև Ջերմուկի միակ բարձրահարկ շենքը (մոտ 2,3կմ): Նախատեսվում է նաև Մաշտոցի փողոցի վերջնամասից սկիզբ առնող և նորակառույց եկեղեցու մոտով անցնող Ազատամարտիկների փողոցի (մոտ 0,5կմ) վերականգնում:

Մաշտոցի և Ազատամարտիկների փողոցներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ճանապարհի երթևեկելի մասի ասֆալտապատման ամբողջական վերականգնում

գոյություն ունեցող մայթեր վերականգնում, նոր մայթերի կառուցում (Ազատամարտիկների փողոց)

ճանապարհի երկայնքով հեծանվուղու գծանշում

ճանապարհի երկայնքով լուսավորման համակարգի բարելավում

ջրահեռացման տարրերով համալրում

Մաշտոցի փողոցի բաժանարար գոտու սիզամարգի բարեկարգում և կանաչապատում՝ նախատեսելով տարածքի ոռոգում՝ ջրի

խոդովակների քողարկումով, մաքրում քարից և բոլոր տեսակի բնական աղբից (տարածքը մշակելուց հետո խոտի ցանում, նոր ծառերի տնկում)
նստարանների և աղբամանների տեղադրում
զբոսաշրջային և ճանապարհային ցուցանակներով կահավորում
Աշխատանքների իրականացման արդյունքում Ջերմուկ քաղաքը կհագենա նոր զբոսաշրջային ուղիներով, քաղաքի ձախափնյա բնակելի թաղամասը նույնպես կընդգրկվի քաղաքի ընդհանուր զբոսաշրջային գոտում, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կաշխուժանա կենտրոնից կտրված թաղամասի առևտուրը:
Լոտ 3 Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում TUR 11.6՝
Ճեմուղին սկսվում է Գնդեվազ բնակավայրից և կիրճով անցնելով հասնում Գնդեվանք եկեղեցական համալիրին մոտեցնող ճանապարհ: Ճեմուղին սալապատված է 90 մմ հաստությամբ տուֆե սալիկներով, բազալտե եզրաքարերով եզրագծված, ճանապարհին նախատեսված է կառուցել 8մ երկարությամբ կամրջակ: Ամբողջ երկարությամբ նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորություն, կառուցվում և տեղադրվում են 2 տաղավար, 5 հատ անձրևից պաշտպանող ծածկով նստարաններ, 20 հատ աղբաման, 2 հատ ցայտաղբյուր ջրամատակարարումով և կոյուղիով:

Բոլոր աշխատանքների նախատեսված ավարտման ժամկետ՝
Լոտ 1 Շահումյանի, Վ. Վարդանյանի, Մյասնիկյանի, Մելիք Ադամյանի և Չարենցի փողոցների վերանորոգում, վերականգնում և «Քարայծ» տանող ճեմուղու կառուցում TUR 11.2՝ 420 օր սկսած Աշխատանքների մեկնարկից:
Լոտ 2 Մաշտոցի փողոցի բարեկարգում TUR 11.3՝ 240 օր սկսած աշխատանքների մեկնարկից:
Լոտ 3 Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում TUR 11.6՝ 180 օր սկսած աշխատանքների մեկնարկից:

<u>Որակավորման չափանիշներն են (որոնք չեն սահմանափակվում*)</u>
ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված
Լոտ 1՝ 1,115,000,000

Լոտ 2՝ 1,050,000,000
Լոտ 3՝ 130,500,000
ՀՀ դրամի շին. աշխատանքների ծավալ,

բ/ վերջին հինգ տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու, ՀԳ անդամ կամ ենթակապալառու կատարած առնվազն երկու պայմանագիր, յուրաքանչյուրն առնվազն՝
Լոտ 1՝ 430,000,000 ՀՀ դրամ արժեքով,
Լոտ 2՝ 343,000,000 ՀՀ դրամ արժեքով,
Լոտ 3՝ 32,200,000 ՀՀ դրամ արժեքով:

Կամ մեկ պայմանագիր առնվազն
Լոտ 1՝ 860,000,000 ՀՀ դրամ արժեքով,
Լոտ 2՝ 686,000,000 ՀՀ դրամ արժեքով,
Լոտ 3՝ 64,400,000 ՀՀ դրամ արժեքով,

Նմանությունը որոշվում է հետևյալ կերպ՝
Լոտ 1՝ ասլֆալտաբետոնե ծածկույթով ճանապարհների կառուցման, վերակառուցման կամ վերականգնման աշխատանքների պայմանագրեր,
Լոտ 2՝ ասլֆալտաբետոնե ծածկույթով ճանապարհների կառուցման, վերակառուցման կամ վերականգնման աշխատանքների պայմանագրեր,
Լոտ 3՝ տարածքների բարեկարգման աշխատանքների պայմանագրեր:

գ / շինարարական փորձը հետևյալ հաջող ավարտված հիմնական աշխատանքներում պետք է լինի՝
Լոտ 1՝ չի պահանջվում,
Լոտ 2՝ առնվազն 1000 մ² մակերեսով տարածքի ոռոգման աշխատանքների իրականացման փորձ,
Լոտ 3՝ առնվազն 500մ² ծավալի չափով սալարկման աշխատանքների իրականացման փորձ

դ/ նվազագույնը
Լոտ 1՝ 122,000,000

Լոտ 2՝ 172,000,000
Լոտ 3՝ 21,500,000
ՀՀ դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ,

ե/ որպես պայմանագրի ստորագրման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված **լիցենզիաների հետևյալ տեսակները՝**

Լոտ 1՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա «Տրանսպորտային» և «Էներգետիկ» ներդիրներով,

Լոտ 2՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա «Տրանսպորտային», «Էներգետիկ» և «Հիդրոտեխնիկական» ներդիրներով,

Լոտ 3՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա «Բնակելի, Հասարակական և Արտադրական», «Էներգետիկ» և «Հիդրոտեխնիկական» ներդիրներով:

Որակավորման պահանջների վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ ներկայացված են մրցութային փաստաթղթում (Բաժին III. Գնահատման և Որակավորման չափանիշներ):

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի (NCB) միջոցով՝ համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» (Հունվար 2011 թ, վերանայված Հուլիս 2014 թ.) «Գնումների ուղեցույցներ»: Մրցույթը բաց է՝ Գնումների ուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի հավելումն՝ խնդրում ենք ծանոթանալ գնումների ուղեցույցի 1.6 և 1.7 կետերին, որտեղ ներկայացված է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:
4. Շահագրգիռ իրավասու հայտատուները կարող են ամբողջական փաթեթը ներբեռնել www.gnumner.am, www.armeps.am կամ

www.atdf.am կայքերից: Ցանկացած կազմակերպություն կարող է գրանցվել էլեկտրոնային գնումների համակարգում և ներկայացնել հայտը ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով (www.armeps.am):

Հայտնում ենք, որ **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը** պատասխանատվություն չի կրում հայտատուի կողմից վերոնշյալ կայքերից մրցութային փաթեթի սխալ կամ ոչ ամբողջական ներբեռնման, ինչպես նաև հետագայում հրավերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողնման համար:

5. Հայտերը պետք է ներկայացվեն **միայն** էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների **Armeps (www.armeps.am կայքէջի) համակարգի** միջոցով ամենաուշը **2021 թվականի հուլիսի 6-ին ժամը 10:00-ին**: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը **չեն ընդունվում** համակարգի կողմից:
6. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն **մրցույթի ապահովման հայտարարագրով**:
7. Պատվիրատուի հասցեն ներկայացված է ստորև՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
պարոն Արթուր Սողոմոնյան, Գործադիր տնօրեն
ՀՀ, ք. Երևան 0037, Կ. Ուլնեցու 31
Հեռ.՝ 374 060 50 15 60
Էլ. հասցե՝ ՝ procurement@atdf.am
Վեբկայք՝ www.atdf.am

Նշենք, որ Ջերմուկում նախատեսվում են ներքոհիշյալ աշխատանքները

-Շահումյան փողոցի բարեկարգում
-Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում
-Ջրվեժի ճեմուղու բարեկարգում
-Ըմպելասրահի, ճեմուղիների եվ շուկայի բարեկարգում
-Եղնիկի դիտահրապարակի կառուցում
-Մաշտոցի փողոցի հիմնանորոգում

Աշխատանքները կիրականացվեն «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» շրջանակներում՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով, Հայաստանի կառավարության և Համաշխարհային բանկի ֆինանսական միջոցներով: Ծրագիրը համակարգվում է Էկոնոմիկայի նախարարության կողմից:

ՀՏԶՀ Լրատվական հոսքերի ծառայություն